

**ԲԱՑ ՆԱՄԱԿ ՀԱՄԱՅՆ ՀԱՅՈՒԹԵԱՆ**  
**Մեկգոնեանի Փակումը՝ Համահայկական Հարց**  
**Օգնե՛ մեզի վաճառքե փրկելու Մեկգոնեան Կրթական Հաստատությունը**

Սիրելի Հայեր,

16 Մարտ 2004-ին, ՀԲԸՄիության Կեդրոնական Վարչությունը (ԿՎ) յայտարարեց մինչեւ Յունիս 2005 Մեկգոնեան Կրթական Հաստատությունը (ՄԿՀ) փակելու մասին իր որոշումը: Մենք՝ Միջազգային Մեկգոնեանցիներս (ՄՄ-աշխարհի տարածքին գտնուող Մեկգոնեան Սանուց Միություններու Համադաշնակցությունը), կը դիմենք համայն սփիւռքահայութեան եւ իւրաքանչիւր հայու, որպէսզի օգնեն մեզի արգիլելու ՀԲԸՄ-ի ծրագիրներուն իրագործումը:

Կասկածէ վեր է, թէ Մեկգոնեանը աշխարհի ամենէն կարեւոր եւ նշանաւոր հայկական դպրոցն է: Ան նկատուած է <<ՀԲԸՄ-ի թագին գոհարը>>: Մեկգոնեան Կրթական Հաստատությունը ոչ ձախողած, եւ ոչ ալ դադարած է ամբողջովին իրագործելէ իր առաքելությունը. ան արտադրած է **ազգին սերուցքը** եւ տակաւին կը շարունակէ ստեղծել ճշմարտապէս սքանչելի անհատականութեամբ, զօրաւոր, յաջողակ եւ կամքի տէր անձնաւորություններ: Աւելին, Մեկգոնեանի շրջանաւարտները, իբր օրէնք, քաղաքականապէս հասուն են, հպարտ եւ խանդավառ՝ իրենց պատմութեամբ, մշակոյթով, քաղաքակրթութեամբ եւ ինքնութեամբ, բան մը, որ կը պակսի ժամանակակից սփիւռքահայ պատանիներու յատկություններուն մէջ: Միայն գիշերօթիկ դպրոց մը կրնայ իրագործել այդ: ՄԿՀ-ը հայ համայնքներուն տուած է առաջնորդներ՝ մտաւորականներ, ուսուցիչներ, ակադեմականներ, բժիշկներ, արուեստագէտներ, հանրային գործիչներ, տարբեր մասնագիտություններու տէր արհեստավարժներ եւ սփիւռքահայ կեանքի յառաջապահներու ամբողջ ցանկ մը:

Այդպիսի դպրոցի մը փակումը մեծ ցնցում մը պիտի յառաջացնէ սփիւռքահայ պատմութեան վրայ, ընկերային քայքայումի եւ մշակութային անկումի մարգերուն մէջ: Հակիրճ՝ ՄԿՀ-ի փակումը, կամ անոր գիշերօթիկ բաժնի դադարեցումը համարժէք է ձուլումը՝ <<սպիտակ ջարդ>>ը քաջալերելուն եւ անոր սատարելուն:

ՀԲԸՄ-ը հետեւողականօրէն ձախողած է Մեկգոնեանը փակելու իր յանձնառութեան բանաւոր արդարացումներ տալու: Աւելին. ՀԲԸՄ ԿՎ-ը ցայսօր մերժած է հարցերուն մասին խորհրդակցիլ յանձնառու կողմերուն հետ, նախընտրելով գործել փակ դռներու ետին: Իրենց բոլոր պատասխանները եղած են երկդիմի, խաբուսիկ եւ խուսափողական: Չկայ թափանցիկութիւն եւ հաշուետւոյթիւն: Աւելի լայն հայկական հասարակութեան հետ անոր գործառնությունները եղած են ամբարտաւան եւ տիրողական: Մեր կարծիքով, ՀԲԸՄ-ը բազում առիթներով ստած է իր ծրագիրներուն մասին, անոնք խուլ ձեւացած են բոլոր դիմումներուն հանդէպ, եւ տակաւին կոյր կը ձեւանան ու կը շարունակեն ՄԿՀ-ի հետ վարուիլ իրենց սեփական կայուածին նման:

ՄԿՀ-ը հիմնուած է սփիւռքահայոց դաստիարակութեան համար, զանոնք հայկական միջավայրի մը մէջ դաստիարակելու նպատակով: Մեկգոնեան վարժարանը աւելի քան քառասուն երկիրներէ եկած պատանիներու առիթը ընձեռնած է միասնաբար ապրելու եւ աճելու ամբողջովին հայկական միջավայրի մը մէջ, այդպիսով միջոցը տալով անոնց պեղելու եւ զօրացնելու իրենց միջեւ գտնուող հասարակաց յայտարարը՝ հայկականութիւնը, ուրկէ ալ եկած ըլլան

անոնք: Սա կարելի է իրագործել միայն երկարամեայ **գիշերօթիկ** դպրոցի մը միջավայրին մէջ, որ ունենայ 78-ամեայ ամրագրուած ասանդութիւններ եւ մշակոյթ. այսինքն ՄԿՀ-ը, ինչպէս որ կայ:

1925-ին, Կարապետ Մելգոնեան իր բովանդակ հարստութիւնը (գործարաններ, Եգիպտոսի մէջ հողատարածքներ, բաժնետիրութեւր եւն.) փոխանցեց Լոզանի ՀԲԸՄ-ին, որպէսզի կազմուի <<Մելգոնեան Հիմնադրամ>>ը: Այդ հարստութիւնը արժեւորուած էր 425,095.2 եգիպտական ոսկիով, իսկ ՀԲԸՄ-ի տոմարներուն մէջ, այն մուտքագրուած է իբր 4,647,020 տոլար: Այսօրուան արժէքով անհկա կը համապատասխանէ **մէկուկէս միլիար տոլարի**: Կարապետ Մելգոնեանի կողմէ յստակօրէն նշուած է, թէ <<**այս դրամագլուխին միայն տոկոսն ու եկամուտը պիտի յատկացուին ու օգտագործուին վերոյիշեալ նպատակներուն համար** [Մելգոնեանի առաքելութեան նպատակը ըլլալով <<**չքաւոր հայ երիտասարդներու կրթութեան ապահովումը**>> տես համաձայնագրին 7-րդ յօդուածը]>>: Սակայն, այն ինչ այսօր մնացած է Մելգոնեան Հիմնադրամէն, կ'արժէ միայն հինգուկէս միլիոն տոլար: 78 տարուան մէջ, ՀԲԸՄ չէ հրապարակած որեւէ տեղեկագիր, բացատրելու, թէ ինչ եղաւ այդ ամբողջ հարստութիւնը, եւ թէ ինք ճշգրտօրէն ինչպէս կը ծախսէ այդ հիմնադրամէն բխող տոկոսները: Աւելին, ան հետեւողականօրէն մերժած է հրապարակել նոյնինքն Մելգոնեանի հաշիւները:

Ուստի, յստակ է, թէ ՀԲԸՄ-ը պարտաւորուած էր գործելու միայն իբր Մելգոնեան Հիմնադրամին մատակարարը (fund manager), եւ իրագործելու Մելգոնեան եղբայրներուն կտակը: Համաձայնագիրը յստակօրէն կը նշէ նաեւ, թէ ՀԲԸՄ-ը իրաւունք չունի ծախելու ՄԿՀ-ի հողերը, կամ փակելու դպրոցը: Այսուհանդերձ, Մելգոնեանի կալուածէն մեծ հողաշերտ մը ծախուած է 1980-ականներուն, որուն հասոյթը գործածուած է <<Մելգոնեան Առեւտրական Կեդրոն>>ի կառուցումին. նախաձեռնութիւն մը, որ կը խոստանար ՄԿՀ-ը ինքնաբաւ դարձնել, թէեւ այդ եկամուտները մինչեւ օրս ուղղակիօրէն կ'երթան ՀԲԸՄ-ին: Աւելին, Համաձայնագիրը կազմուած է այնպէս՝ որ ՄԿՀ-ը չի կրնար փակուիլ, նոյնիսկ եթէ ՀԲԸՄ-ը սնանկանայ: Ան նաեւ կը պարունակէ դրամատուներու ուղղուած շատ մասնայատուկ ցուցմունքներ, այն միջոցներուն մասին, զորս պէտք է որդեգրել, եթէ ՀԲԸՄ-ը անկարող ըլլայ ապահովելու ՄԿՀ-ի առաքելութեան շարունակութիւնը: Այս բոլորով հանդերձ, ՀԲԸՄ ԿՎ-ը ինքզինքին ազատութիւնը կու տայ որոշելու ՄԿՀ-ի փակումը մինչեւ Յունիս 2005:

Անոնք (ՀԲԸՄ ԿՎ-ը) ա՛յդ <<որոշած են>>, եւ եթէ ոչ ոք կասեցնէ զիրենք, այդ որոշումը ի գործ պիտի դնեն մինչեւ Յունիս 2005:

### **Մենք օգնութեան կոչ կ'ուղղենք համայն հայ հասարակութեան**

Նկատի առնելով բոլոր վերոյիշեալները,

ա. ՄԿՀ-ը տակաւին կ'ամբողջացնէ իր առաքելութիւնը, եւ դեռ է՛ սպիւռք-ահալութեան ամենէն կարեւոր եւ եզակի դպրոցը: Իսկ դպրոցին մակարդակը միշտ վերելքի մէջ է,

բ. ՄԿՀ-ը կրնայ ըլլալ, եւ է՛ նիւթապէս ամբողջովին ինքնաբաւ հաստատութիւն մը, առանց կարիքը ունենալու ՀԲԸՄ-ի ընդհանուր ֆոնտերէ ներդրումներուն,

գ. դպրոցի փակման առաջարկը կը հակասէ Կարապետ Մելգոնեանի 1925-ի կտակին,

դ. Կիպրոսի ժողովուրդն ու կառավարութիւնը կը փափաքին ՄԿՀ-ը տեսնել Կիպրոսի մէջ, եւ արդէն իսկ յանձնառու եղած են կրկնապատկելու իրենց մեծագումար տարեկան յատկացումը դպրոցին,

ե. Կիպրոսը, Մայիս 1 2004-էն սկսեալ Եւրոպական Միութեան անդամ դառնալով, Մելգոնեանին պիտի տրամադրէ ալ-աւելի նպաստաւոր առաւելութիւններ, քան որեւէ տարբեր այլընտրանքներ:

Հետեւաբար, մենք, Միջազգային Մելգոնեանցիներս (ՄՄ-աշխարհի տարածքին գտնուող Մելգոնեան Սանուց Միութիւններու Համադաշնակցութիւնը), կոչ կ'ուղղենք համայն հայութեան եւ իւրաքանչիւր հայու, որպէսզի առաջ գալով, իրենց կարողութեան լաւագոյնը ընեն (նիւթապէս թէ գործնապէս), օգնելու մեզի մեր պայքարին մէջ, ընդդէմ այն մշակութային ցեղասպանութեան, որ ՀԲԸՄ ԿՎ-ը պատրաստ է գործադրելու:

Կոչ կ'ուղղենք սփուռքահայ բոլոր կազմակերպութիւններուն, հնարաւոր բոլոր միջոցներով դէմ կենալու ՀԲԸՄ-ի որոշման իրագործման:

Կոչ կ'ուղղենք հաշկական բոլոր թերթերուն, լրատուներուն, կայքէջերուն, ուստիոկայաններուն, հեռատեսիլի ալիքներուն, որ տարածեն ու հանրութեան մատչելի դարձնեն տեղեկութիւնը այն աղէտին մասին, որ ՀԲԸՄ-ը մտադրած է իրագործել:

Կոչ կ'ուղղենք իւրաքանչիւր ազդեցիկ հայ գործարարի ու դիւանագէտի, որ նպաստէ մեր դատին, միջամտելով ՀԲԸՄ ԿՎ-ի մօտ, եւ/կամ օժանդակէ մեր դատին նիւթապէս թէ գործնապէս:

Կոչ կ'ուղղենք ամէն հայու, որ նեցուկ կանգնի մեզի, հնարաւոր բոլոր միջոցներով՝ համայնքին մէջ այս հարցին մասին տեղեկութիւն սփռելով, հարցին մասին գիտակցութիւն արթնցնելով, եւ ուր որ հնարաւոր է, յօգուտ Միջազգային Մելգոնեանցի կամ տեղական Մելգոնեան Սանուցի մասնաճիւղին հանգանակութիւն կազմակերպելով: Ոչ մէկ մասնակցութիւն, նիւթական, թէ բարոյական, փոքր է:

Մելգոնեանի փակման եւ վաճառքի խնդրին վերաբերեալ բոլոր մանրամասնութիւնները տրամադրելի են [www.SaveMelkonian.org](http://www.SaveMelkonian.org) կայքէջին վրան:

Նախաձեռնած ենք հանգանակութեան մը, <<Միջազգային Մելգոնեանցի Հիմնադրամ>> անուան տակ: Բոլոր նուիրատուութիւնները պիտի յատկացուին դպրոցը իր ներկայ վիճակով բաց պահելու ջանքերուն: Իւրաքանչիւր սէնթ իր օգուտը ունի, եւ կը դիմենք ամէն հայու, որ կ'ուզէ կասեցնել մեր ժողովուրդի այս նոր սպիտակ ջարդը, որ կատարէ իր նուիրատուութիւնը: Ձեր նուիրատուութիւնը կրնաք կատարել կա'մ online, կա'մ դրամատնային փոխանցումով կա'մ ամսական/շաբաթական յատկացումներով: Հաշուեհամարին ու նուիրատութեան ձեւերուն մանրամասնութիւնները հեշտութեամբ կրնաք իմանալ մեր կայքէջէն՝ [www.SaveMelkonian.org](http://www.SaveMelkonian.org):

Ձեր մասնակցութիւնը այս արշաւին ըլլայ 5 եւրոյով, 20 փաունտով, թէ 10,000 տոլարով, ըլլայ հաւանական նուիրատուի մը ուղղած նամակով, թէ հեռաձայնային զրոյցով՝ ըլլայ հեռատեսիլի հաղորդումով, ուստիոհաղորդումով, թէ

թերթի յօդուածով, ըլլայ ձեր կայքէջին վրան մեր նշանը գետեղելով, ըլլայ հայկական կեդրոններու մէջ տեղադրուած մեր հարցը լուսաբանող որմագրով, թէ թերթիկով, ըլլայ յօգուտ ՄՄ-ին ձեռնարկուած հանգանակութիւնով, թէ ՀԲԸՄ ԿՎ-ին ուղղուած նամակով, մեծապէս պիտի գնահատուի եւ մեզ քայլ մը եւս պիտի մօտեցնէ համահայկական դպրոցին փրկութեան:

Կը խնդրուի այս նամակէն օրինակ մը պատճենել եւ յղել ուրիշներու: Կրնա՛նք փրկել եւ պիտի՛ փրկենք Մելգոնեանը: Կը խնդրուի չանտեսել այս կոչը: **Արթնցի՛ր եւ կանգնի՛ր:**

Անկեղծօրէն՝

Միջազգային Մելգոնեանցի (ՄՄ)

(Փրկենք Մելգոնեանը Արշաւ)

[www.SaveMelkonian.org](http://www.SaveMelkonian.org)

e-mail: [admin@SaveMelkonian.org](mailto:admin@SaveMelkonian.org)

Սա այլեւս համահայկական հարց է: **ՊԻՏԻ ԶՅՈՒՆԻՆՔ**